

գասիրը... Դուք էք իմ մուսան»—էջ 7. հանելուկ. մվ կամ  
բնչն է Մարգարի մուսան:

2. Փ. ՄԱՍՍՈՒ, Նապաստակ ԽԵՂԱՆԻ ՎՐԵԺԻՆՊՐՈՎԹԻՆԸ ԿԱՄ ԻՆՔՈ ՔԵզ  
օգնիք. զրոյց պատկերազարդ, ֆրանս. փոխադրեց Լևոն Մելիք-Շղամեանց. Թիֆ-  
լիք 1905. էջ 57.

Ճիշտն ասեմ վաղուց է այսպիսի հայաշունչ լեզուով  
գրուած մանկական գիրք չեր ընկել ձեռքս. թէև գրքի վրայ  
փոխադրութիւն է տպուած, բայց իսկապէս ինքնուրոյն աշ-  
խատութեան տպաւորութիւն է թողնուած. Գրքի իւրաքանչիւր  
էջից բուն հայ լեզուի բուրմունքն է ստացւուած. գեղեցիկ ոճեր,  
ժողովրդական բառեր, կոկ, պարզ գել իւրըմբոնելի նախադա-  
սութիւններ. այսպիսի յատկութիւնները զնահատելի են գրեթի  
և մանաւանդ մանկական ընթերցանութեան գրքերի համար:  
Այս մանկական զրոյցի բարոյականն է ինքնօգնութեան գա-  
ղափարը, որ շատ յարմար ընթերցանութեան նիւթ է մանա-  
ւանդ մեր ժամանակներում. միշտ ուրիշների լուսով ապրողը  
վերջը բոլոր ունեցածն էլ կլորցնի: Գրքի արտաքինն էլ հա-  
մապատասխանուած է ներքին արժանաւորութեանը. տպուած  
է մաքուր, խոշոր տառերով և ընտիր թղթի վրայ. յաջող են  
նաև պատկերները:

3. ՅԱՐ. ԵՍԱՑԵԱՆ. Միևնույն գաղաղում... պատկեր. Թիֆլիս 1905 թ. էջ 16.

Վերջին տամամեակի ընթացքում հայ ժողովրդի կրած  
սոսկալի տառապանքները, հայի ընակավայրը արեան հեղեղներով  
ծածկող գազանային արարքները, մի այնպիսի զրութիւն ստեղծե-  
ցին, որի առաջ նսեմացան մեր պատմագիրների և ձեռագիրների  
յշեցատակարաններում նկարագրուած արիւնալի ու հոգեմաշ  
գքքաղտութիւնները, հայութեան սև ճակատագրի միշտ և շա-  
րունակ կրկնուող պատահարները: Ժողովրդական սարսափի  
մը տեսակը մնաց, որ չկրեց բազմաշարչար հայութիւնը. կո-  
տորած, աւերում սով, հրդեհ, երկրաշարժ, երաշտ, մորեխ,  
խօլերա, բռնութիւն, բանտ, աքսոր... էլ մը մէկն ասեմ: Եթէ  
այս զանութեան ու լեռնացած վշտի շըջաններում մենք տա-  
ղանդաւոր գրողներ ունենայինք, կարող էին իրենց անունն  
անմահացնել՝ իրական կեանքի արիւնաներկ դրամաները շա-  
րահիւսելով. բարթուղիմեան պատմական գիշերները մեր ներ-  
կայի լոկ ուրուագծերը կարող են լինել.... Տարարախտաբար

հայութեան միջավայրը տաղանդներ չէ արտադրում. ունեցել ենք և ունինք շատ թէ քիչ շնորհալի գրողներ, որոնք իրենց կարողութեան չափ նկարագրել են սոսկալի իրականութեան. միայն թոյլ անդրադարձումները:

Վերջին սարսափիների մի փոքրիկ միջադէպք է նկարագրուած «միենոյն դագաղում» պատկերի մէջ. մեր ժողովրդական գրողների շարքն անցնող Յ. Նայեանն իւր տովորական. շտապ գրչով պատկերացրել է Բագուի աղէտներից մի էպիզօդ, որի էութիւնը հետեւեալն է. ծերունի զաղթական մշակը, որ իւր ժամանակին փախել է Տաճկանայաստանի կոտորածից, Բագուի հանգստարանում գերեզման է փորում թուրքերի պիղծ ձեռքով մորթոսուած զոհերի համար. թաղուող գիակների մէջ ծերունին ճանաչում է իւր միակ երիտասարդ զաւակին և ինքն էլ անշնչացած ընկնելով թաղուում է, միեւնոյն դագաղում, իւր իսկ փորած գերեզմանի մէջ:

Թէև նկարագրութիւնը պարզ և անպաճոյն է, բայց տըպաւորութիւնը զօրել է, որովհետև գրուածքի բոլոր թերին լրացնում է ընթերցողի երեակայութիւնը, Այսուհետև երեի այսպիսի պատկերներ գեռ շատ կկարդայ բաղդից հալածուածթշուառ հայ ժողովուրդը:

#### 4. Совещаніе учителей начальныхъ училищъ.—Перепечатано изъ газеты «Кавказъ».

Բաւական ժամանակից ի վեր Կովկասի դպրոցական գործը բոլորովին շեղուելով բնական ընթացքից՝ փոխանակ մանկավարժական սկզբունքներով ղեկավարուելու, միմիայն քաղաքական տեսակէտով էր առաջնորդուում: Այսպիսի թիւր դպրոցական սիստեմը հարկաւ լաւ արդիւնք ու հետևանքներ չէր կարող ունենալ. մի գեղեցիկ օր պէտք է երեան գար, որ այդ մանապարհով ձգտած նպատակի ճիշտ հակառակն է եղել արդիւնքը: Այդպէս էլ եղաւ: Կովկասի նոր նշանակուած նորին կայսերական մեծութեան տեղակալը տեսնելով տարրական դպրոցների այդ անմսիթար դրութիւնը և սխալ սխտեմի հետեւանքները, անհրաժեշտ համարեց արմատական փոփոխութեան ենթարկել դպրոցական գործը և կրկին մանկավարժական հիմքերի վրայ դնել. նա հրամայեց, որ ատրբական դըպրոցներում ուսուցումը տեղի ունենայ սովորողների մայրենի լեզուվ, իսկ ուսաց լեզուն ուսուցանուի մայրենի լեզուի օժանդակութեամբ. ուսւերէն պարագիտութիւնը պէտք է սկսուի եր-